

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ Ս. ՀՌԻՓՍԻՄԵ ՎԱՆՔՈՒՄ

Սույն թվականի հուլիսի 2-ին, կիրակի օրը, Պայծառակերպության տոնին, Վեհափառ Հայրապետի բարձր կարգադրությամբ, կատարվեց Աշոտ սրկ. Թովմասյանի քահանայական ձեռնադրությունը:

Քահանայական ձեռնադրությունը տեղի ունեցավ Ս. Հռիփսիմե վանքում՝ ձեռամբ Արցախի թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Պարգև եպս. Մարտիրոսյանի:

Հուլիսի 1-ին կատարվեց նորընծայի «Յերեկոյէ կոչումն քահանայութեան» կարգը, ըստ Ձեռնադրության Մաշտոցի՝ խարտավիլակությամբ Տ. Միքայել աբդ. Աջապահյանի:

Հուլիսի 2-ին, ս. պատարագից առաջ, նորընծան ծնկաչոք բարձրանում է խորան և, ձեռքերը բարձրացրած դառնալով դեպի ժողովուրդը, հրաժարվում է աշխարհից՝ կոչվելու համար «ի սարկաւագութենէ ի քահանայութիւն սուրբ եկեղեցւոյ»: Հնչում է «Աստուածային և երկնային շնորհ» շարականը: Ապա նորընծան մոտենում է Տ. Պարգև եպիսկոպոսին, որը և ձեռքը դնելով նրա գլխին՝ հանդիսավոր կերպով արտասանում է ձեռնադրության աղոթքը. «Ես դնեմ զձեռս ի վերայ սորա և դուք ամենեքեան աղօթս արարէք, զի արժանի լիցի սա զաստիճան քահանայութեան, անարատ պահել առաջի սեղանոյ Տեառն Աստուծոյ»:

«Ողջոյն»-ից առաջ նորընծան ստանում է քահանայական փիլոն, սաղավարտ, փորուրար և շուրջառ:

Ձեռնադրության խորհրդավոր պահն է: Ձեռնադրող սրբազան հայրը օծում է նորընծայի ճակատը և վերանվանում Տ. Մկրտիչ քահանա:

Նորընծա Տ. Մկրտիչ քահանան տալիս է իր առաջին օրհնությունը՝ «Խաղաղութիւն ամենեցուն»:

Հավարտ պատարագի հոգևորականաց, սարկավագաց ու դպրաց դասը, ինչպես նաև ներկա հավատացյալ ժողովուրդը շնորհավորում են նորընծա քահանային՝ սրտագին բարեմաղթություններով:

Օծման պահ